թեացւոյն Յովհաննու Աւետարանի խաղուածոց մեկնութիւնը, (ՄՁ. թ. 592). նոյն թուականին և նոյն տեղը կ'ընդօրինակէ նաև Գրի. վրդ. Տաթեւացւոյն Մեկն. Մատթէի խաղուածոյն (ՄՁ. թ. 721) և 1739ին Ն. Լամբր. Մեկն. Սաղմոսացը (ՄՁ. թ. 709)։

ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՑԻ (Լեռնային Կիլիկիա) Քրձ.— ՄՁ. թ. 89 ձեռագիր աւետարանը բուն գրչին յիշատակարանէն զատ ունի յիշատակարան մը ևս տարբեր գրչով, որ է այս «...եւ արդ գրեցաւ սակաւագիծ յիշատակարանս այս ձեռամբ յոգնամեղ եւ անարժեստ գծողի, որոյ անուն Գրիգոր Ակներցի յորջորջի։ Ի խընդրոյ պատուելի և սրբասնեալ կուսակրաւն քահանայիցս Յովհաննէսի, Մկրտչի, Ստեփաննոսի և Գրիգորի։ Որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի և նախնեացն իւրեանց յառաջկոցն առ Քրիստոս. ամէն։ Այլև Ատոմ միայնակեցին, որ յոյժ աշխատեցաւ ի յընծայաբերութիւն սբ. Աւետարանիս։ Եւ քանզի լի և պատարուն ունի զյիշատակարանս Աւետարանս այս զառաջնոց երախտաւորացն ի սմա, որոց ողորմեսցի տէր Յս. և թողցէ ըզյանցանս նոցա. իսկ զայժմուս երախտաւորքս զվերոգրեալ քահանայքս, որ բազում աշխատանաւք բերեալ զաւետարանս զայս եղին ի սբ. և յառաքելական աթոռս յայս, ի վերատեսչութեան Գրիգորիսիս և տէր Յովհաննէս վրդ.իս ՊԼԵ (= 1386) ամի յաբեթական տոմարի առհմիս։»

Ունի ուրիշ յիշատակարան մը ևս «... Ողորմիա խոճայ ճանազիզի և ծնողաց իւրոց, որ եկն ի Տփխիս քաղաքէ և բազում արդիւնս արար ի յաղքատս և ի կրաւնաւորս և յեկեղեցիս և զսբ. աւետարանս ետ վերստին կազմել պատուելի և ճգնազգեաց եպիսկոպոսին Գաբրիելի Կարբեցոյ, որով արքայութեան արժանի առնէ Քս. Աձ. զճանազիզ խոճան և զծնողսն իւր, ամէն։

Ի թվ. Հայոց ՊՁԷ (= 1438) կազմեցաւ Սբ. Աւետարանս ի Սբ. Քաղաքն Երուսաղէմ»։ (Խաչ. Ցուց. տետր Բ. էջ 99-100)։

ԳՐԻԳՈՐ ԱՃԷՄԵԱՆ.— Պարսկաստանէն Երուսաղէմ գաղթող ազգային մը. որուն սերունդէն միշտ կ'ընտրուէին Ս. Յակոբի վանքին բարգմանիները։

ԳՐԻԳՈՐ ԱՃՃԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ, Քրձ.— 1908ին իր ծախքով շինել կուտայ Ս. Յակոբի վանքին Ջամ թաղի երկաթէ ցանկա-